

## 5

## ԽԱԼԱՆՏԱՐ \*



ալանտար կամ Գալանտար Մոքոսի \*\* հոգեմօր միակ որդին էր, նորա մայրը—Խարակեօզ Սուլթանը երբ Թլա բերդի մէջ պաշարուած էր, Մօքոս զԽալանտար ազատեց՝ Լճայ Բարունակ բարեպաշտ իշխանին յանձնեց, այս իշխանն ևս յանձնեց իր տան մէջ բնակող մի վարժապետի, որ գրել և կարդալ սովորեցուց Խալանտարին:

Խալանտար իր անցքերը այսպէս կը պատմէ.

—Մօքոս հայրեկ զիս երբ փախուց, յանձնեց Բարունակ իշխանին, իշխանն ևս յանձնեց վարժապետին, որ գրել ու կարդալ սովորեցնէ:

Այն սաստիկ մեծ ճակատամարտին, թագաւորը աղքիւրի վրայ սպանուեցաւ. Բարունակ իշխանը բռնուեցաւ, քառասուն օր ի բանտ մնաց, նօթի, ծարաւ. հոգին աւանդեց:

Խալանտարիս մէջքը կոտորեցաւ. յոյսս, ապաւէնս այլ ևս վերջացաւ, օգնականս այլ մեռաւ-գնաց, այլ ևս ինձ ապրելու յոյս չմնաց:

\* Խալանտար ժողովրդական վեպը տասծ է Մինաս բարար. Այս վեպս լամ եմ նաև ի Տրապիզոն հայ աշղներէն բուրգարարան պատմելու եւ երգելու միջոցին. իսկ Մինաս բարար հայերէն պատմեց եւ երգերէն երգեց, զրի առի վեպի պարունակութիւնը եւ հայերէնի վերածեցի երգերն:

\*\* Մօքոս. Ժողովրդ, վեպ. գրի առաւ. Ս. Հայկունի, Վաղարշապատ, 1896 թ:

Դանից չեմ կարող դուրս գալ, զբացի տղամբ թշնամի դարձած է, հետամուտ էին ինձ հարուած տալ և սպանել:

Կը քարկոծէր փոքր տղան անդամ չարացած. ինչ կողմ գնայի, կը քջապատէին, զիս չարաչար կը գանակոծէին. մի օր տասներկու երիտասարդ իրարու մէջ չար խորհուրդ յղացած էին, որ հնար զըտնեն, մի տեղ գան, զիս կրակի, սրի, կամ ջրի բերան տան:

Ես միամիտ՝ զիս խարեցին. — գնանք, խաղանք ասացին. գինի, օղի ու թոռ առինք, Սանախսուայ ջրի եղրը գնացինք. ձուկ որսացինք, խորոված արինք, հաց կերանք, գինի, օղի խմեցինք:

Ընկերներս ուռկանը վերուցին, տարին. Ուռենեաց լիճը ձգեցին, ուռկանը արմատներու վերայ փոեցաւ և մրզիներու փաթութեցաւ: Այլ ևս հնար չկար վեր քաշելու, մին չը իջնար քանդելու. մերկացայ, իջայ ցած, քանդեցի՝ «զիս քաշեցէք վեր», ձայն սոռեցի:

Ընկերներս ուռկանը վեր քաշեցին, աղաչանքս, հեծլլատանքս և հառաջանք չմեցին, զիս թողին ջրի մէջ:

Ջրի մէջ այս այն կողմ լողացի. մի մրզիքի ձեռք ձգեցի, դարձեալ հառաջանք աղաչեցի, խնդրեցի:

Ընկերներս իմ վրայ գթացին, պարանը ջրի մէջ ձգեցին, քաշեցին, զիս դուրս հանեցին:

Ես կարծեցի թէ իմ վերայ խղճացին. յանկարծ տեսայ հաւաքուեցան, վրաս թափեցան, զիս պարանով բարտիներուն փաթութեցին, հոնի ծառներէ բողոքոջ կտրեցին. մերկ անձս զանակոծել ական:

Մին վարոց կը զարնէ, չը՛փ, միւսն ապտակ կտար թրըմփ. մէկն ևս բարկացած կը հայհոյէր. միւսը սողանել կտպանար զարացած:

Մին ճպոտը կը բարձրացնէր, միւսը վարոցով կը հարուածէր, վարոցի ու ճպոտի շաշինը ամբողջ ձորը բռնած էր:

Զարադործներ չորերս վերուցին, կրակի մէջ դիին վառեցին, նոր հասկացայ-ինչ վիճակի հասայ. — վայ ինձ մտածեցի, զիս պիտի սպանեն:

Ես կիսամեռ՝ ուշաթափ եղայ, չարագործներ գիտցան թէ մեռայ: Քմծիծաղով ճանապարհ ընկան, իւրաքանչիւրը մի տեղ ցրուեցաւ:

Այդ տեղ շատ թէ քիշ մնացի, ալեործերունի վարժապետս կը հարցնէ. — ընալանտարս ուր է, չինի մի փորձանքի պատահեր է, ու

1. Բարունակ իօխամի դէմ վրէծ ունէին. կարծելով թէ սա նորա որդիմ է, որով սորանից եւս վրէծ կը լուծէին:

Զարագործներ բարկացած ասացին. —«մենք ինչ դիտենք քու աշակերտին»:

—«Դարձելիներ, ասաց. ձեր ընկերն է, միթէ դուք չեք դիտեր, ուր է»:

Ծերունի վարժապետ տիկնոջ հարցուց—«ուր ես ճանապարհ դրած Խալանտարու»:

Տիկինա ևս ասաց.—կարդ մի երախաք՝ դինի, հաց առին, Խալանտարն ևս իրենց հետը Սանախասուայ գետը տարին:

Վարժապետ խիստ յուզուած մտածեց.—ոտով չեմ կարող գնալ, ուժու սպառած է. ճանապարհը նեղ է, աւանակ չգնար. ով Աստուած, ինձ արա մի հնար:

Գիշերը շատ մտածեց, քունը չտարւաւ. ծխպամորճը լեցուց ու դատարկեց, ծուխը ներս կառնէր ու դուրս կը դատարիէր, հառաջելով ինքն իրեն կրաէր.

—«Եշանը սպանեցին, նա գնաց. իմ վերջին յոյս—Խալանդար ուր մնաց. արդեօք չարագործներ զայն կորուսին, թէ խեղդեցին, և կամ ջուրը ձգեցին:

Ոչ, ես դիտեմ Խալանտարին, եթէ քարով նորա զարնէին, նա ևս նրանց կը ջարդէր, եթէ բռնէին, չէին կարող զապեր. եթէ մի բան կայ, այն է՝ դինի խմցուցին, արբեցնելով ջուրը ձգեցին:

Այս, Աստուած, ինչ անեմ. քառասուն տարի վարժապետ եմ, այս գիշերուան չափ տանջուած չեմ»:

Կուզէ-կուզ ելաւ վեր, իշուն համեռը զարկեց, փորքաշն ևս պնդացուց, հեծաւ, ճանապարհ ընկաւ. արշալոյսի վերայ Սանախասուայ ձորը իջաւ, իշու կապը բռնեց, քաշելով գնաց, չորս կողմ նայեցաւ, հասաւ այն կրակին, տեսաւ Խալանտարի շորերը վառած, գլխարկն ևս խանձ կտրած. ասաց—վայ, այս ինչ վիճակ է, ուշը գլխէն թուաւ-դնաց:

Զգաստացաւ, դարձեալ շրջեցաւ, որոնեց, գետի միւս կողմ ևս անցաւ. վեր-վայր գնաց, եկաւ. մի նշան՝ մի բան չգտաւ:

Ծերացած էր, աչքերը լաւ չէր տեսնէր. զրի հանդէպ մի բան կը նշմարէր. սակայն խիստ բարտիները արգելք կը դառնային. ջուրն ևս անցնելու կարող չէր:

Այստեղ մի ճանապարհորդ—Ագարակցի երիտասարդ պատահեցաւ. վարժապետին տեսաւ:

—Բարե քեզ, վարժապետ. ասաց, ինչ կանես այս տեղ.

—Աստուծոյ բարին, որդի, եթէ զիս կը սիրես, մի անցիր զրի միւս կողմն, տես, այն բարտիներու մէջ ինչ կայ:

Երիտասարդն անմիջապէս անցաւ, մի առ մի նայեց ծառաւտանի մէջ. յանկարծ տեսաւ զԽալանտար ամրապինդ ծառին վա-

թութած, կտրեց կապերն, վերցուց դրեց ձիուն վերայ իւր առաջ, բերեց վարժապետին, որ նոյն երիտասարդի հետ անմիջապէս վաթութեցին իշու վրայ, առին-տարին Ագարակ. ուր ոչխար մի մորթեցին, մորթը Խալանտարին վաթութեցին:

Խալանտար քսան և չորս ժամ մնաց մորթի մէջ, սկսաւ տակաւ առ տակաւ կենդանանալ. վարժապետի կասկածը փարատեցաւ, զգաց որ Խալանտար պիտի առողջանայ:

Փոքր ինչ միջոց անցաւ, Խալանտար սկսաւ ձայն ձգել.—և այրեցայ, վառեցայ, չեմ կարող տոկալ, զիս արձակեցէք:

Վարժապետ մորթի միջից հանեց, լողացուց զԽալանտար. որ լողացաւ, հանգստացաւ, ոսքի կանգնեցաւ, սկսաւ մանդալ:

Մի-երկու ամիս անցաւ, Խալանտար բոլորովին առողջացաւ, վարժապետ նստած կը մտածէր.—մենք ուր գնանք, ոչ ինձ յոյս և տէր կայ, ոչ Խալանտարին. այս երկրի մարդիկ չար են:

Մի օր ևս Խալանտար նստած ինքն իրեն կը մտածէր իւր «ինքն»—. ևս թագաւորի որդի եմ թէն, սակայն ներկայ թագաւորը Զինաքեար բունաւոր, իւր ժողովուրդը անխիղն, անդութ. անհնար է յետ դառնալ իմ հայրենի տունը, և անկարելի է կեանք վարել այս ժողովուրդի մէջ, Մօքսոն<sup>2</sup> ևս անհնարին է գտնել:

Խալանտար յուղուեցաւ այս մտածման մէջ. գլուխը բացաւ, ձեռներն դէպի երկինք պարզեց, խնդրեց.—Ո՛վ Մօքսո, հայրիկիս Սանուկ տղան, խնդրեմ քեզմէ, սաստիկ մահ մի տուր այս շարացած մարդոց, Ագարակի սահմանաց մէջ:

Երեք աւուր վերայ մահը ընկաւ. մինչև քառասուն օր ժողովրդեան մեծ մասը սրբեց, առաւ տարաւ:

Մահը որչափ որ կոտորեց, միւս մնացած մասը ամին բան թողին, մահուան երկիւղէն ջրի միւս կողմն անցան. երեք ամիս այն տեղ բնակեցան. իրենց գիւղը աւերակ մնաց, Խսկ վարժապետը մի ամիս մնաց, տեսաւ որ գիւղը աւերակ դարձաւ, եղաւ իւր էլլ հեծաւ, Խալանտարն ևս իւր առջևը ձեռ, ընկան ճանապարհ, գնացին:

Գնացին, մի կամրջից<sup>5</sup> անցան, ջրի վեր ուղղուեցան, Սերկե-յիլ գիւղը մտան, ուր Մուրատ իշխանի տունը հարցուցին, օթեա-նեցան:

Մուրատ իշխանը տունը չէր, մի օր վերջը, որ շարաթ էր, տուն դարձաւ. տեսաւ հիւրերն, ասաց.

1. Ցեղը, ժնողը, իւրեանց բազաւորութիւնը, անցուցած կեամբ:

2. Մօքս առանձնացած նզմաւորական կեամք կը վարէ:

3. Սանախուայ Պագարսուզ տերէսի կամուրջը. ասէի ճանապարհը երկումի կը բաժանուի, մին Օվանուի՝ խակ միւսը Քեմախ Անի ամրոց, կը գնայ:

— Թարի, հազար բարի եկած էք, սլատուական հիւրեր:

— Ողջ բարի, իշխան. պատասխանեցի:

— Թագաւորի սահմանը մահ ընկած է, իրաւ է:

— Այս, ճիշտ է, մահը նոճները կտրեց տարաւ, հարիւր տարուան փաղարները թողեց. պատասխանեց Խալանտար:

Մուրաստ իշխան Խալանտարի երեսն ի վեր նայեցաւ, իրեն շատ հաճելի թուեցաւ. դարձաւ իւր կնոջ ասաց.

Այ կին, եթէ սորա նման մի տղայ բերած լինէիր, իմ սրտի ցանկութիւնը պասկուած և իղձերս ի կատար հասած կը լինէր:

— Իշխան, ահա քեզ տղայ, ասաց վարժապետը:

— Ահա, ես ևս հայր, ասաց իշխանը, թող մնայ տանս:

Վարժապետը պայման գրեց, ստորագրեցին:

Խալանտար մնաց Մուրաստ իշխանի տունը իրբև որդեգիր:

Խալանտար 12 տարեկան էր երբ Բարունակ իշխանի մօտ եկաւ, 15 տարի կարդաց, հինգ տարի ևս Մուրաստ իշխանի մօտ մնաց:

Մուրաստ իշխանը խոնարհ, բարեպաշտ և հիւրասէր մէկն էր, իսկ նորա կինը բռնաւոր ու վայրագ էր. քանի որ իշխանը ողջ էր, կինը—Մարան երկիւղ կը կրէր, զինքը մի կերպով կը զապէր. երբ իշխանը մնուաւ, Մարան ձի նստած, տէզն ու նիզակ ուսած; լեռնէ լեռ, քաղաքէ ի քաղաք ման կտար, անկարդ կեանք կը վարէր:

Խալանտար հովութեամբ կը պարապէր, իշխանի անդեան ու հօտը կարածեցնէր, լեռներու մէջ կեանք կանցնէր. շնած էր եղեգէ գրիչ, գործելիչ (ածուխից) թանաք և ծառի տերեներէ թուղթ, հովուական երգեր կը յօրինէր ու կը գրէր:

Հովուական կեանքը շատ հաճելի թուեցաւ Խալանտարին. նա մոռացաւ իւր հայրենական թագաւորութիւնը, ամեն ինչ, այլ սիրեց երգել. ու գրել. որով երդիչ դարձաւ:

Գիւղացիք տեսան նորա վարքն ու բարքը, նորա գեղեցիկ յատկութիւնը, նորա հնարագէտ հանճարը, ասացին:

— Խալանտար, դու որ այդչափ հնարագէտ ես, հանճար ու գիր ունիս, սիրուն երգեր կը յօրինես, այլ ևս ինչու ընկած կմնաս բըռնաւոր Մարանի ձեռքի տակ և բնչպէս կը տոկաս նորա անկարդ, անբարյական ընթացքին:

— Հայրս թագաւոր էր, ասաց, չուրախացայ. դունէ ի դուռ ընկայ, մարդ մի անդամ որ դուրս ընկաւ, ամեն մարդոց հետ վարուելու, ամեն տառապանք տանելու է:

Խալանտար ինքն իրեն մտածեց—արդարեւ իմ այս տեղ մնալը մի օգուտ չունի. գնամ, մի տեղ իմ զիսուս ճարլը գտնեմ:

Խալանտար մի նրգնկացի ընկեր ունէր. համոզեց նորան, առաւ

իւր հետ, ընկաւ ճանապարհ դէպի Երգնկայ: Շատ ու քիչ գնացին, Երիզայի առջև հասան, Եփլատ գետը անցան. իսկ Երիզա շմտան, այլ ուղղուեցան դէպի ի Դերձան:

Խալանտարի ընկերը բաժանուեցաւ, մնաց Խալանտար առանձին. նա թէն ճանապարհը շարունակեց, սակայն ամաչկուս լինելով՝ ոչ մի տեղից հաց չէր կարող խնդրել. այլ լսած լինելով՝ Դերձանի մէջ Մեղիքէն և գիւղի Ասլան աղայի հացաշատ տունը, դիմեց-դնաց, իջևանեցաւ այդ գիւղը. բայց գիշեր էր, մաշդու դուռ չզարկեց, այլ կալը ցորեանի թեղի վերայ պարկեցաւ. քնոյ մէջ երազներով տանջուեցաւ, որով այլ ևս չուզեց քնիլ. վեր երաւ, ցորենի թեղը էրնեց, ցորենը մաքրեց, նստաւ ոչ հանգստանայ:

Այս միջոցին կալի տէրը եկաւ, տեսաւ մի անծանօթ տղայ՝ թեղը էրնած, ցորեանը յստակած է. ուրախացաւ:

Ցորեանի տիրոջ անունն է Ասլան աղա, կնոջ անունը Խումարկոզ, աղջկան անունը Սելինազ:

Ասլան աղայի գրացիք ասացին.

—Ասլան աղա, բաղդդ յաջող է.

—Այն, գրացիք, Աստուած գիտէ որ մարդ չունիմ. Աստուած այս տղան յղած՝ թեղս յստակած է:

—Ասլան աղան, դա շատ չնորհալի տղայ կերեի. ծառայ բռնէ:

—Որդին, անունդ ինչ է, հարցուց Ասլան աղան Խալանտարին:

—Անունս Խալանտար է, աղա, պատասխանեց:

—Կարո՞ղ ես ինձ ծառայել.

—Այն, կարող եմ, աղա, գործս ինչ է:

**Ասլան աղան իւր աղջկան կանչեց.**

—Սելինազ, Սելինազ, հաց բեր Խալանտարին, գիշերը մինչեւ լոյս աշխատած է, սոված կը լինի:

Սելինազ գնաց, անմիջապէս քանի հաց, մի պնակ մեղը, մի պնակ սեր և մի պնակ ևս կարագ առաւ բերաւ. գրեց Խալանտարի առաջ, որ ուտէ:

Խալանտարի աջը երք առաւ Սելինազին, հացը մոռացաւ, լսելըն ու ուշ գնաց, ուշաթափ ընկաւ:

—Աղջիկ, դու դորա թոյն տուիր, հարցուց Ասլան աղան:

—Չէ, հայրիկ, դեռ մի բան կերած չէ, ասաց Սելինազ:

Դրացիք ասացին.—Տղան անօթի էր, յարդին մոեղը (շատ մանը գոշիացած յարդ) շնչած լինելով՝ նաև գիշերը չէր քնած, այժմ ևս արեգակը վրան զարկեց. որով տղան հնձուած խոս դարձաւ:

4. Սելինին գիւղը Եփրամի եզերի եւ Մերման կրնի սորոսն է:

Զուրը լեցուցին սրտիկին, ուշը եկաւ դիմիկն. ելաւ սկսաւ հաց ուտել:

Աչքերը յառած Սելինազի երեսին՝ բրդուճը զարկեց մեղրի մէջ, որ բերանը պիտի տանէր, գէպի ականջը տարաւ:

Սելինազ տեսաւ որ չէ կարող ուտել, ինքը օդնեց, կերցուց, որով Խալանտար փորը կշտացուց:

Խալանտար երեք ամիս մնաց այդ տունը, եղաւ տան տղի պէս, Սելինազի սիրուն չէր ուզէր այդ տնից հեռանալ:

Մի օր ինձն իրեն մտածեց.—այլ ևս ինձ վիճակուած է երկրադական կեանք, անցան-գնացին թագաւորութիւն ստանալու յոյ-սերը, Զինաքեար՝ թագաւոր սատկած և նորա տեղ այլք յաջորդած են. այս տեղ ով գիտէ թէ ևս թագաւորի որդի եմ, տրեխս այլ պիտի հագնեմ, լուծք ու գութան ևս պիտի վարեմ. բաւական է որ Սելինազ զիս կը սիրէ, ևս նորան կը սիրեմ:

—Ո՞րդի, մի օր ասաց Ասլան աղան Խալանտարին. գու այլ ևս տան տղայ ևս, առունը քեզ կը յանձնեմ. արտերը գիտես, վարէ, սերմանէ, տան գործերը կարգադրէ:

—Ո՞ւր պիտի գնաս, աղա, հարցուց Խալանտար:

—Կարին պիտի գնամ, ուր վաճառական մի կայ, հինգ տարի է նորանից առեւտեւր արած եմ, պարտքս չեմ տուած, կերթամ թէ պարաքո տալու որպէս զի այլ և այլ պիտոքներ ևս առնեմ, բերեմ:

Ասլան աղան գնայ, երեք ամիս մնաց Կարին:

Խալանտար նոյն աշունը ցորեանը սերմանեց, տան վառելիք փայտը բերեց. աշնան պատրաստութիւնը տեսաւ, եզները ձմեռը պահպանեց, իսկ երբ գարնան զլուկս գետինը սեացաւ, դրացիք երբ սկսան գնալ գարնցանք, Ասլան աղայի կինը կանչեց Խալանտարին.

—Ո՞րդի, առաց. դրացիք 1-2 արտ սերմանած կը լինին, դու ևս պատրաստուէ. առաւօտ վազ ել, եզներու կերը տուր, սերմն ևս բարձիր իշուր վրայ, Սելինազ թող քշէ եզներն. գնա, հասիր արտն, Սելինազ եզներն թող լծէ, դու ևս սերմանէ. երբ սերմանեցիր, դու կը վարես, Սելինազը կը յիշս տուն, որ հաց բերէ քեզ. ուտէք և դարձեալ վար անէք:

Պառկեցան, աքաղաղը դեռ չէր խօսած, Խալանտար վեր կացաւ, գնաց գոմը, եզներու տակ մաքրեց, եղը իւր պոչը դորտըցուց, ճրագը անցուց: Աղջկան մայրը կանչեց.

—Սելինազ, վեր կաց, ճրագը բռնէ, որ Խալանտար քուչնայ տայ եզներուն:

<sup>4-</sup> Զինաթեարի զերեզմանը Արմանու սահմանին մէջ՝ իւր բերդն է, կասէ Մինաս բարար:

Աղջիկը ճրագը բռնեց, իսկ Խալանտար իւր միաքը փոխեց. ճրագը անցուց, բռնեց աղջկան երեսը համբուրեց. աղջիկը ինք զինք թոթուեց, ճրագը առաւ, ներս-տունը մտաւ:

Խալանտարի սիրոն դող առաւ երկիւղից. դնաց դռան մօտ կանգնեցաւ, տեսնէ թէ աղջիկը իւր մօրը բան կասէ:

Մայրը հարցուց, —Աղջիկ, ճրագը ինչո՞ւ անցուցիր:  
—Եզր պոչը դորաբցուց, անցաւ:

Ճրագը վառեց, աղջկան հետ մապիլնը դիւրացուցին՝ շաբաթ օր դնացին, արտը սերմանեցին, կիւրակէ օր մնացին տունը: Աղջկան մայրը —Խումարկեօղ զգաց որ Խալանտար և Սելլինադ իրար սիրահարուած են, ուզեց իւր աղջիկը տայ Խալանտարին, որ նորա ուաքը կապսի, մնայ իրենց տունը:

Որով նոյն օրը քեշկէկ (լաւ չհարուած հերիսա) եփեց, եկեղեցին դուրս ելլողը տուն հրամարեց. դրացիներուն կերցուց, իւր աղջկան նշանը դրեց, Խալանտարը որդեգրեց որ իւր աղջկան հետ կարգէ:

Դրացիք ասացին. —աչքերդ լոյս, մին ևս թէ — Աստուած շամաչիցին. մի այլն նաեւ-շնորհաւոր լինի. մի ուրիշն նաեւ — բաղրաւոր լինին:

Ամբողջ գիւղացիք լսեցին որ Սելլինազը Խալանտարին նշանեցին:

Խալանտարի ուրախութեան չափ չկար. նա երկուշաբթի օր լուծք դնաց. արօրի մաճը բռնած՝ արտի այս ծայրէն միւս ծայրը խաղալով կերթար, այդ տեղ մաճը կը քաշէր, եզներն կը դարձնէր ակոսի վրայ, դարձեալ խաղալով կդար, դուրս կելէր արտի այս ափը. այնպէս յափշտակուած էր, որ շատ անդամ կը մոռանար թէ եզներն ուր կը քաշեն, ակոսը ուղիղ թէ խոտոր կը գծեն:

—Օ՛, օ՛, Խալանտարը կը խաղայ, Խալանտար, ինչո՞ւ կը խաղաս, հարցուց մի միջահասակ մարդ, որ Խալանտարի դրացի էր, անունը թօփ աղաւ:

—«Միայն կամ, Երուսաղէմ,» ուռ չես լսած, Սելլինազի պէս նշանած ունեմ, որ աշխարհի մէջ մի հատիկ է, որոյ նմանը երբէք չգտնուիր, ուրեմն ես շխաղամ, ապա ո՞վ պիտի խաղայ:

**Միջոց** մի Խալանտար իւր կեանքը այսպէս անցուց. նա ամեն գործի մէջ ուրախութեամբ կը թափանցէր, տանը ամեն թերութիւնները կը հոգար, ամեն գործի կը հասնէր:

Միջոց մի անցաւ, Ասլան աղան տուն վերադարձաւ, տեսաւ տան կարգն ու սարքը. լսեց որ Սելլինազ նշանած է Խալանտարին:

—Նատ լաւ արած էք, այ կնիկ, ասաց նա. Խալանտար մեր

համար թէ տղայ է և թէ փեսայ. նաև հաւատարիմ մշակ. ես շատ սիրեցի զինք:

Ապան աղան մի ամիս մնաց-չմնաց. արտի մէջ խոփը կոտրեցաւ. ուստի ելաւ գնաց Դիվրիկ, խոփ բերէ. վասն զի լաւ խոփը Դիվրիկ կը շննէին. առաւ խոփը Դիվրիկէն, վերադարձաւ:

Գիշերը մնաց Երիզա (Երզնկայ):

Ապան աղայի մի բարեկամ կարաւանապետ նոյն օրը եկաւ, Ապան աղայի կարերը իջևանեցաւ, Ապան աղայի տունը չգնաց՝ նրա համար, որ նա տունը չէր. Ապան աղայի կինը լուր յդեց որ տուն դայր—Ապան աղան տունը չէ, չեմ գար. պատասխանեց:

Խումարկէօգ հաց տուեց Սելլինաղին և յդեց կարաւանապետին:

Սելլինազ հացը դրե ցնորա առաջ, ինքն ես բարե բռնեց. առջնը կանդնեցաւ. Երբ կերաւ վերջացուց, սեղանը վերլուց, տարաւ Սելլինազ:

—Այս աղջիկը որին է, հարցուց կարաւանապետը:

Այն միջահասակ մարդը-Թօփի աղան որ այն տեղ էր, ասաց.

—Ապան աղայի աղջիկն է:

—Միթէ Ապան աղան այսպէս սիրուն աղջիկ ունի. այդ աղջիկը ինձ հարս լինէր, իմ մի աշքն ևս կոյր լինէր:

—Օ՛ հօ, այդ աղջիկը նշանած են Ապան աղայի ծառայի հետ, որ մի փարայ անդամ չարժեր, շատ յարմար էր որ քեզ հարս լինէր. ասաց այն միջահասակ մարդն, որ արտի մէջ Խալանտարի խաղալուն կը նախանձէր:

Ապան աղան եկաւ, իջաւ, խոփերը ձիու վրայէն իջուց. ինքն ևս ծխապարճը կարգադրեց, ծխելով գնաց դէպի կարաւանապետը:

—Բարի օր, բարեկամ. բարով, հազար բարով:

Կարաւանապետը իւր երեսը խոժոռած, քթի ծայլով (դժգոհ) բարե առաւ:

—Բարեկամ, ասաց Ապան աղան, մի բան պատահած է, ինչ եղած, որ այդպէս տիսուր ես:

—Ապան աղա, դու այդպէս սիրուն ողջիկ ունենաս, ինձ առանց հարցնելու տանես մի աղքատ ու կեղտոտ ծառայի տաս. մարդու խնամին ևս իրեն հաւասար լինելու է. դու ինչ խեցով տուիր:

—Դորա համար է երեսներդ կախած ես, բարեկամ. կուտանք քո տղին, հոգ մի քաշեր, մենք ծառային չափտի տանք, այլ նորան խարած՝ մեր աղջիկը տալու յուսով կաշխատեցնենք, նորա մօրուքին կը ծիծաղենք:

Ապան աղան առաւ իւր բարեկամ կարաւանապետը, գնաց տուն, սուրճ, ծխապարճ, ձուածեղ, հաւ, գինի ելն. պատիւ գլխէն տնցաւ, բարձրացաւ: Դուան մօտ, հեծեղաքարին վրայ նստած կը խօսակցէին. խօսակցութիւնը մինչև երեկոյ տևեց:

Վերի միջահասակ մարդը, որ ամեն սատանութեան մէջ մատունէր, բայց ուսը առած, եկաւ Ասլան աղայի մօտ:

—Բարե՛, աղմա, ասաց:

—Աստուծոյ բարին Թօփ (կըոր) աղա, հա, ինչ կայ:

—Խոփերը քանիի առիր:

—Երկու գահեկսնի, Թօփ աղա, ասաց:

Թօփ աղան քիչ ինչ արնանաց, աստի-անտի մի քիչ բան լսեց. գնաց արտը որ վշեր արմատահան անէ: Տեսաւ դարձաւ, զԽալանտար նոյն ձեռվ խաղարվ կերթայ, կդայ, վասն զի Ասլան աղան ևս հաճած էր զՍելլինազ տալ:

—Այժմ ինչու կը խաղաս, Խալանտար, հարցուց Թօփ աղան:

—Սելլինազի պէս նշանած ունեմ. . . ինչու չխաղամ, ասաց:

Թօփ աղան ինքն իրեն մտածեց Խալանտարի զլուկ մի խաղ խաղալ:

—Խալանտար, ասաց. «միայն կաս Երուսաղէմ,» չասէս որ Սելլինազը կարաւանապետի տղային տոււած են. դու այսօր հաց կերպած ես, ինչու կը խաղաս, երբէք չես զգար կէս օրը անցած է. Սելլինազ հաց շերեր:

Խալանտար յանկարծակի եկաւ, թեւերը թուլացաւ.—Թօփ աղա, ասաց. այդ ինչ տխուք լուր հաղորդեցիր. կարծես Մերճանու լեռը վերաս տապալեցիր, ես զիս կորուսի, խելքս մղուեցաւ ովկիանոսի մէջ. երբ երախսայ էի, բերդի մէջ պաշարուած էի Զինաքերի անգութ գորքերէն, որք անգթաբար ամեն մարդ սպանեցին. արիւն հեղեղի պէս գնաց. սակայն այսչափ ցաւ չըզգացի, այս ինչ սև լուր էր. արդեօք ստո՞յդ էր թէ կատակ կանես:

—Ես ինքս լսեցի, ասաց:

Խալանտար ինչ արաւ.—Ելաւ արօրը կոտրեց, հայտէ՝ տուն, Գնաց որ Ասլան աղան ու կարաւանապետը հեծելաքարին վրայ նստած՝ ուրախ-զուրախ միմեանց հետ կը խօսակցէին:

—Այդ ինչ է, Խալանտար, հարցուց Ասլան աղան:

—Կոտրած է, աղմա:

—Է՛, ինչու կոտրեցաւ, որ արտն է կը վարես:

—Խճոտ արտն է, աղմա:

—Արօրներն այդ տեղն դրուած է. մին առ, գնա, վարէ:

Արօրը տարաւ. կէս ճանապարհին կոտրեց, դարձեալ յետ դարձաւ:

—Տղմա, այս անգմամ ինչու կոտրեցիր:

—Խճոտ է, ինչ անեմ:

—Դէ՛, առ արօրը, գնա:

Տղան այս-այն կողմ աչք ձգեց, որ մի միջոց, հնար գտնէ, գնայ,

Սերվինազն ու նորա մայրը տեսնէ. սակայն ճանապարհ չկար. յուսահատ առաւ արօրը ու գնաց, եզներն լծեց. տարաւ քարին կը թընցուց. դարձեալ կոտըեց:

Այսպէս քսան և չորս արօրն ևս կոտըեց:

Տղան խիստ նեղ վիճակի մէջ է. կորուսած է զինք. եկաւ տուն:

—Խալանտանը, շուտ չէ որ եկած ես, սերմէ սպառեցաւ.

—Արօրները կոտըեցան. մի հատ անդամ չմնաց ողջ, աղա, ասաց:

Ասլան աղան մտաւ բակը, տեսաւ որ արդարի՝ չկայ:

Կարաւանապետը Ասլան աղային սրեց որ Խալանտարին գանակոծէ. —Նա իւր կերած հացը չարժեր, տես, որչափ վիաս տուեց. արդ՝ տուիթը եկած է զայն տնից արտաքսելու, ասաց:

Խալանտար զգաց կարաւանապետի սրելն, ընկղմեցաւ խոր մըտածման մէջ. —Եօթ տարի անվարձ, անդրամ աշխատեցայ, հազիւ Սերվինազ սիրելիս գտայ, այժմ ես ուր և ինչպէս պիտի գնամ. սիրելին ինչպէս բաժանուիմ. վայ կարաւանապետ, վայ, միայն դռւ էիր մնացած փորձանքի պակասը լրացնելու, ուր ևս բուսար, իմ տուն հիմնայտակ կործանեցիր, իմ սիրտ աւերակ դարձուցիր:

Ասլան աղան ասաց. —Խալանտար, այլ ևս դքեզ չեմ պահեր, իմ դուռը չ-ուտի մնաս, քեզ կէս ստակ վարձք այլ չեմ տար. ուր կերթաս, գնա:

Երեկոյ էր, անձրե կդար. Խալանտար ոչ ճանապարհ և ոչ տեղ գիտէր, որ գնայ. միթէ կարելի՞ էր նորա սիրտն ու հոգին այդ անկից բաժանել, քանի որ իր կեանքը այդ տան մէջն էր և իւր Սերվինազ սիրելին կարելի՞ էր թողով ու հեռանալ:

Ասլան աղան ու իւր բարեկամը մտան ներս. դուռը գոցեցին. դուան վերել մի սենեակ կար, մտան այդ տեղ. մի կողմէ կը խմէին, միւս կողմէ կատակեներ աներով կուրախանային. իսկ Խալանդար դուրս, անձրեի ներքե, մութ գիշերը, յիշելով անցեալը՝ սրտառուչ կերգէ.

—Կա'ց, տէրս, համբերէ, բող արշալոյսը բացուի,

Զկ', ու տունն իմ տունս կարծելով եօթ տարի կեանէս մասեցի.

Իմ սիրոյ գրաւական՝ մի անգամ Սերվինազն համբուրեցի,

Կա'ց, տէրս, համբերէ', բող արշալոյսը բացուի:

Կարաւանապետը պեց. —Ասլան աղա, ահա, տես, եօթ տարի քո տունը մնացած՝ աղջկանդ երեսը համբուրած՝ տունդ քանդած՝ պատիւդ ուսնակոյի արած է:

Ասլան աղան կատաղեցաւ, տղան անձրեկ տակ շարունակեց. —

Կա'ց տէրս, համբերէ', աղաս, արշալոյսը բացուի,

Դուռը բաց, տէրս, բազմակարօս անձ չտչորուի,

Քո տնեն իմ վերջին կարօս առնեմ ու գնամ,

Գնամ, դարձեալ Սելվինազի համար դառնամ գամ:

Թօուառութենէ փախայ, այս աշխարհ եկայ,

Փո տուն ինձ համար պատսպարան գտայ,

Որբ Խալանտարս, սրտով ուրախացայ,

Կա'ց, տէրս, համբերէ, Ապան աղա:

Ապան աղան բարկացած գուրս երաւ, խիստ կերպով գանակոծեց. իսկ կարաւանապետն ևս ներսից կը սրէր, որ սպանէ:

Խալանտար փոքր ինչ հեռացաւ, դարձեալ դուն մօտեցաւ:

Աշնան ցուրտն էր, անձրեւ մինչև ոսկորներն թափանցած՝ սառը քամին մարմնոյն մէջ մտած՝ կը մնկաւար, երբեմն շան պէս կը կաղկանձէր, և կը թախանձէր որ ներս առնեն, սակայն դռները նորահամար պինդ փակուած էին:

**Նրգեց.**—Ձայն տուէք մօրս գայ, վիճակս տեսնէ,

Իւր աղն ու հացը ինձ հալալ անէ,

Զիս այս վիճակին հասցնողը Աստուծմէ գտնէ.

Կա'ց, տէրս, համբերէ աղաս, ցայզն բացուի:

Հառաշանես երկինք բարձրացաւ,

Պանդուխս եմ, մի՛ տրտմենտ զիս,

Թօուառ եմ, մի՛ լացներ զիս,

Օսար եմ, մի ցաւցներ զիս:

Աստուծոյ սիրուն, Ապան աղա՛,

Վարձատէրէ, մի՛ ասեր օսար է.

Գրա՛ որբիս, մի՛ ասեր պանդուխս է,

Տու՛ր Սելվինազ, մի՛ ասեր թօուառ է:

Գիշերը Խալանտար մնաց գուրսը. ոչ ոք դուռը չբացաւ. երկիւդից մարդ ևս գուրս չէր դար, կարծելով թէ յուսահատ Խալանտար մի փորձանք կը բերէ:

Կէս գիշերը անցաւ, ամեն ոք քննեցաւ. ձայն-ձուն կտրեցաւ. բայց ձիւնախառն անձրեւ կը տեղայ. սաստիկ ցուրտ է: սակայն Խալանտար Սելվինազի սիրուն կը ճենճերտայ, կը վառի. քաշուեցաւ տանը միւս կողմը, Սելվինազի լուսամուտի տակ, տիսուր երգեց.

—Քեզ սիրեցի սրտով ու հոգւով, հոգիս,

Վիճակս ինչո՞ւ դառնացաւ, սիրելիս.

Երէ իմ այս վիճակին կամակից ես,

Ահաւոր դատասանին պարտական ես:

**Սելվինազ կերգէ.**

—Թոյլ տուր, կտրին, բանդուած սիրտ ժինեմ.

Հոգի՝ կուզես, բաղցը հոգիս ենց նուիրեմ.

Կուխսեմ յԱստուծ, վարդ ծոցդ մտնել.

Հիւղեակս փշերու ներին հաստատել:

Խալանտար կերպէ.

—Խօսուածեղ քաղցր է, քան վարդն օսարի,  
Կասկածիմ, վարդ ծոցդ օսարը սովորի.  
Արի՛, սիրելիս, ուխտէ՛, երդուէ՛,  
Խալանտարի բռուառ կեանքը փրկէ՛:

Սելլինազ.—

Երէ բուրաստանը իմս է, սիրելիս,  
Ո՞վ կը համարձակի վարդ քաղել, նոգիս.  
Մինչ ի մահ կոխսեմ ժեզ իմ կեանքս,  
Յետ մահուն կը նուիրեմ ոսկերքս:  
Սելլինազ կասէ—ես սիրտ ունիմ.  
Դու եւս խօսի ունիս ու բերան,  
Պատճառը ի՞նչ է այդպիս ըուանեցար.  
Զե՞, ուղտէն մեծ փիդ կայ ու փղապան:

Խալանտար իմացաւ Սելլինազի մրաքն, որ առել կուզէր՝ թէ  
աշխարհ դատաւոր կայ, դիմէ՛, խօսէ պահանջէ զիս, ես քոնն եմ:  
Ասաց.—Դուշս առնեմ, արեւապատճերու մեջ զնամ.  
Գնամ-զնամ, գուցէ այլ եւս վերադառնամ:

Խալանտար թոյլ տուեց Ասլան աղայի տունը, ընկաւ ճանապարհ ու գնաց. հասաւ Նրիզայ, մտաւ ժողովարանը որպէս զի խնդրագիր գրել տայ և տայ փաշային. բայց խնդրագիր գրողներն զրամ կը պահանջեն գրելու համար, իսկ Խալանտար մի փարայ անդամ չունէր. սկսեց երգել:

—Ա՛յ երկրի մարդք, կը պահանջէ դրամը.

Կասէֆ.-այս իրւեր ո՞ւստի եկած է Վարպետնի ի՞նչպիս դաս առած է.

Զե՞ նոր տեսայ այս վայրը,

Կուզէ իրաւունքը պատճանել,

Տունը մոռցայ խակը.

Իւր սիրահարը ձեռք ձգել.

Դուք չգրէք, ես կը գրեմ.

Դուք չգրէք, ես կը գրեմ.

Ո՞վ կասէ—անսիրահար եմ, իմ Սելլինազ եար կորոնեմ:

ԶՍելլինազ եար կորոնեմ:

Կասէֆ.-այս իրւեր ո՞ւստի եկած է:

—Աղաներ, ասաց Խալանտար. դրամ չունիմ. խնդիրք գրեցէք,

որ տանեմ փաշային տամ:

Խնդիրք չգրեցին, այլ երկու մատնելը իրար քսեցին, նշմարան-

քով դրամ պահանջեցին:

Այդ տեղ մի ծերունի կար, լած էր Խալանտարի երգերն, բար-

կացաւ գրագիրներու վրայ. գրել տուեց մի խնդիր, տուեց Խալան-

տարին. Խալանտար առաւ խնդիրքը, գնաց ի Կարին, ներկայացաւ

Վալի փաշային, խնդիրը յանձնեց:

Ի՞նչ կայ, տղաս, հարցուց, փաշան.

—Մէր տէ՛ր, տէր փառայի ըուրջը

Պատած է փայլուն դրօժի ըոլը.

Հեռի՝ թէ մօս նրաման արձակիս,

Հրամանդ կատարուած կը տեսնես.

Այս իմ վիճակիս, ցաւոյս, փա՛սաս,

Մի դարման գտնես, Սուլքանս.

**Փաշան կասէ.-Տղա, ինչ կասես, չեմ հառկանար.**

—Խումբ մի աստղերի համասեղութիւն կասեն,

Դերնանի դաշտի մէջ Մեղիքէն կանուանեն.

Իմ սիրուհոյս անունը Սեղինազ կասեն,

Այս իմ վիճակիս, իմ ցաւոյս մի հնար, Սուլքանս:

Որբ ու քուառ Խալանտար՝

Խոժոռ դէմքէդ կը լինի սարսափահար.

Գիշեր, ցերեկ ևեզ կեանք կը խնդրէ.

Նորա դառն վերելոր դարմանէ:

Զիեզ, ինձ ասացին, բժիշկ Լօխման,

Այս իմ ցաւերուս պիտի գտնե՞ս դարման:

**Փաշան խնդրագիրը կնքեց. կանչեց վէզիր ու նազիրը, ասաց.**

—Շուտ այս տղի գործը կը նայիք. Երեկոյին հասաւ՝ երեկոյին, առաւ-  
տօռն հասաւ՝ առաւտօռն, այս տղի նշանաձը կառնէք, կտաք իրեն:

Ասացին.—Փաշա, չունենք այնպիսի մի մարդ որ կարողանայ  
գործադրել. եօթ տարի է բանտը մի մարդ կայ, այն կարող է:

Բերին բանտարկեալը փաշայի ատեանը, փաշան հարցուց.

—Անունդ ինչ է.

Ասաց.—Թաղրի-թանըմազ (անաստուած):

—Ինչու համար Թաղրի-թանըմազ կասեն քեղ,

—Ուստի որ դրամ և կամ մի այլ բան փոխ առնէի, այլ ևս  
չէի վերադարձներ, որու որ մի գործ խոսանայի, չէի կատարեր:

—Վեզիր, ասաց փաշան. իմ ձին կարմէ քառասուն քեսէ (մի  
քեսէն 500 զուգուշ է), տառը այս Թաղրի-թանըմազին, որ գնայ,  
Խալանաարի գործը տեսնէ:

Թաղրի-թանըմազ հեծաւ ձին. քառասուն լորանոց կիւրզն ևս  
առաւ ոււը, քշեցին, գնացին, հասան Մեղլքէն:

Կարսաւանապետը եկած, հարսանիքը սկսած էր. դավուը ու  
զուռնան թըմփ-հա-թըմփ, զըռ, հա զըռ կածէր:

Ասպան աղան եկած էր արտը իւր ցորեանը ջրելու, Խալանտար  
հասաւ նորա մօտ, բարե տուեց:

—Աստուծոյ բարին, Խալանտար. ասաց:

Խալանտար հանեց վաթտոցի միջէն փաշայի գիրն, ներկայա-

ցուց Ասլան աղային. Ասլան աղան բացաւ որ կարդար. Խալանտար չհամրերեց, պարունակութիւնը երգով յայտնեց.—

Մեր տեր փառայի բարեւը կայ.

Գրուած խնդիր ու նրամանը կայ,

Այն խնդիրը որ իմ գործն է,

Կատարե՛, Ասլան՝ աղա:

—Տղան, շուտ գայիր, այժմ ես ինչ կարող եմ անել, Կարաւանապետը եկած՝ աղջիկը տարած է:

Տղան էր առաւ գիրը, զարկեց գլուխը:

Ասլան աղան տեսաւ Թաղրի-թանըմազը, ճանաչեց որ նա եօթ տարի է բանտն էր. հասկացաւ որ Խալանտար հանել տուած է, վազեց գնաց տուն, դավլուլի ու զուռնայի ձայնը կտրեց. քառասում դուռ ունէր, քառասունն ևս փակեց. լուսամուտները գոցեցին, լուռ ու մունջ ներսը նստան:

Թաղրի-թանըմազը ձայն տուեց.

—Ենուա արէք, դուռը բացէք:

Դուռը չբացին, որպէս զի ուրիշ տուն երթայ և իրենք գիշերը Սելլինազ այլ տեղ փախցնեն:

Թաղրի-թանըմազ ձին դարձուց, սկսաւ գնալ. Երբ Խալանտար տեսաւ, կանց լալ:

Բայց կրկին դարձաւ, ձին քշեց, կիւրզը ուժով ձգեց, քառասուն դուներ մի անդամէն կոտորեցան, տունը դողաց. տնեցիք ու հարանեւորք սարսափեցան:

Ասլան աղան և կարաւանապետ երկիւղից ցած իջան. վազեցին ձիու սանձը բռնեցին, թեսերու տակ մտնելով բարձրացուցին վերի սենեալը, բազմեցուցին:

Հրաման արձակեց Թաղրի-թանըմազ. հարսանիքը շարունակեցին, դավուզ, զուռնայ, պար ու խաղ սկսաւ. ուրախացաւ կարաւանապետը. նորա բեռները ոսկի էին, ոսկին բուռ-բուռ բերաւ, Թաղրի-թանըմազի գորգի տակ դատարկեց. Թաղրի-թանըմազն է 1—2 թիզ ոսկու վրայ բարձրացաւ:

Խալանտար տեսաւ.—վմայ-վմայ, ասաց. այդ անաստուածը իմ գործս չպիտի տեսնէ. ոսկինվ պիտի կաշառուի:

Երգեց.—Ոսկիները բուռ-բուռ ընդունեցիր,

Խրաւունես կասկածի տակ ձգեցիր.

Թաղրի-քանըմազ, լիւկ' ցաւալի վիճակս.

Իմ գործը կարգադրե, ո'վ անաստուած:

Թաղրի-թանըմազը մի կողմէն ընդունեց ոսկու կոյտը, միւս կողմէն լսեց Խալանտարի ցաւալի երգերն. մտածեց,—զիս բանտէն աղատողը Խալանտարն է. կանչեց կարաւանապետը, ասաց,

—Սելլինազ կը կանչեմ, կը հարցնեմ, նա որու որ հաճութիւն տուեց, նորա կտամ. ոչ ոք իրաւունք չունի մի բան ասելու։  
Խալանտար այս որ լսեց՝ վազեց Սելլինազի լուսամուտի տակ.  
սկսաւ երգել։

—Միրե՛լիս, այսօր դատասան կայ.

Գովե՛լիս, այսօր դաս ու իրաւունք կայ.

Սակայն կասկածիմ՝ վրա ուշ չդարձնես,

Զի սիրուն-նախօսուն ուրեր չունիմ ես։

**Աղջիկը երգէ.**—Դատասաննեն փախչող կտրին ամօր չունի.

Նա սատանայի յարմարած է, Աստուած չունի,

իմ խալանտարս այլ սիրահար չունի,

Տունս փեխ տակ՝ միա՛կ սիրահարս խալանտար։

Լսեցին որ ահա, աղջիկն ու տղան երգով իրենց կամքը յայտնեցին։

—Այլ ևս ինչ դատասատան, ասաց Թաղրի-թանըմազը։

Ուկիները լցեց խուրճինը։

—Կարաւանապետ, այլ ևս քեզ գործ չկայ, աղջիկը Խալանտարին կտոնէ. գնա գործիդ, ասաց։

Կարաւանապետի տղան մտածեց.

—Հայրս բեռներով ոսկի ծախսեց, գործս չաղջողեց. գննէ աղջկան երեսը տեսնէի, իմանայի թէ ինչպէս է. ձանապարհ ընկնելու հետ էր, մտաւ ներս. աղջիկն որ տեսաւ, ուշը գնաց, ընկաւ գետին։

Սելլինազ բերեց սառը ջուր լցեց վրան, ուշաթափուեցաւ, նստաւ.

**Աղջիկը երգեց.**—Եատ մի նայիր, վեսա՛ս, կը լինիս հիւանդ,

Մի սեր ունիմ, տուած եմ Խալանտարին աւանդ.

Գնա՛ ենզ վիճակուածը Աստուծմէ խնդրէ.

Տունս փեւրու տակ, սիրահարս-միակ Խալանտար։

Կարաւանապետն ու իւր տղան, նաև իւզ հարսներները ամօթալից դռնէն դուրս եղան, յետ-յետ նայելով գնացին։

Ասլան աղան մորթեց քարասուն խոյ, եօթ կաթսայ քեշկէք եփեց, կանչեց-հրաւիրեց դըացիքը, որք հաւաքուեցան, կերան, եօթ տարսան եօթ կարսա գինին խմեցին, խմողը ասաց. «Աչքդ լոյս Խումարկէօզ», «աչքդ լոյս Սելլինազ», «աչքդ լոյս Խալանտար»։

բայց երբէք մին չասէր—աչքդ լոյս Ասլան աղա.

Կիւրակէ օր մ'էր, հարսներներով գնացին Ս. Թէոդորոս մատուռը, պսակեցին. բերին եօթ օր, եօթ գիշեր հարսնէք արին։

Նոքա հասան իրենց վափագին, դուք ևս հասնէք ձեր վափին։